№ 13 ՁՈՐՔԲՇԱԲԹԻ 1884 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ 22 ՓԵՏՐՎԱՐԻ

Հրատարակումն շաբաթը 1 — 3 անգամ։

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 1 րուբ.

Խմբագրատունը բացէ 2—5 ժամը կէս օրից յետոյ։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն, ռուսերէն և Թուրքերէն լեզուներով։

ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտարարութիւնների համար վճարվում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — միանգամ, 3 կոպ. — երկու անգամ, իսկ մնացած անգամների համար պիտի աւելացնել կէս կէս կոպեկ։

Խմբագրատունը գտնւում է, Երևանում Աստաֆեան և Բէհբութեան փողոցների անկիւնում Էմին տէր Գրիգորեանցի տպարանում։

ԼՈՒՐԵՐ

Թերթիս անցեալ 12 համարում լրերի մէջ մի սխալ է տպրել. գրամատուր պակեանները փոխանակ 2,325,082, րուբլու՝ տպուած է 23,25,082 ր.

—

Սատանք „Ափարատիւ“ ներկայ թուի 1 համարը։

—

Բարեկենդանն անց կացաւ, մեծ պատ եկաւ, իւղը ձիթի փոխուեց, իսկ մենք էլի միևնոյնն ենք։

Սովորաբար պէտք է ասենք „շնորհաւոր պաս“, բայց հիմի ի՞նչ պաս, ի՞նչ բարեկենդան. մարդիկ նիւթական օրդիներ են դառել, միանգամայն անտերբեր են դէպի ամեն ինչ և միայն փող, փող և փող են պատում։

Եկաւ բարեկենդան, ոչ մի տեղ չերևաց նախկին խնճոյքներն և ուրախութիւնները. եկաւ վերջին հինգշաբթին՝ ջահել սրտերը թնդացին։

Յայտարարութիւնս նախապէս աւետեց Հոգևոր Դպրանոցի վարչութեան գեղեցիկ կարգադրութիւնը. այն օրուայ համար ամենքին հրաւիրեց ս. Սարգիս, բայց մենք դեռ յայտարարութիւնը հրատարակելուս երկմիտ էինք յաջողութեանը և մեր կասկածն արդարացաւ եկեղեցի դընալուս, երբ տեսանք բոլոր խանութները քան սովորականին բաց. մեր վաճառականները բերանները կխաբաց յամախորդի (մուշտարու) էին սպասում։

Ահա այսպէս նկնդեցումը և դըպրոցումը ուսանող սերունդն է իւրեանց ծնողաց երեսը պարզ անում։

Շատ գեղեցիկ համեմատութիւն էր պ. Բէգնազարեանցի արածը, նա իւր առաջնաբանութեան մէջ բացակայ վաճառականներին ուրացող վատակին նմանեցրեց. պարոնի սիրտը շատ իրաւացի լցուեցաւ արիւնով, երբ գտաւ Երևանի վաճառականներին, երկու երեքի բացառութեամբ, արհամարհած այն մեծ օրը։

Բայց, արդեօք, Բէգնազարեանցը միակողմանի դատուեցաւ՝ միայն շնչահալով վաճառական դասի բացակայութիւնը, թէ խօսքերը իւրեան խեղդեցին և չ՚կարաց շարունակել և մարակել Երևանի հասկացող երիտասարդութեանը, մեր հայ ինտելիգենցիային, որոնց հետքն անգամ չէր երևում, բացի պ. քաղաքապետից, մենք դժուարանում ենք բացատրելու. հաւանականը նորա սրտալիր յուզմունքն էր։

Ափսոս որ պ. Բէգնազարեանը չըկարողացաւ փոքր ևս շարունակել, որ տեսնէինք թէ վարդանանց ժիշատակը, չպատուող վաճառականներին վատակի հետ հաւեմատելուց յետոյ՝ ո՞ւմ պէտք է նմանացնէր վերջիններին։

Սրատուչ էր պ. Բէգնազարեանցի առենախօսութիւնը, մենք թոթովում ենք նորա ձեռքը և ասենք, իւր խօսքերը ձայն բարբառոյ յանապատի ճնացին Երևանի հայ ինտելիգենցիայի և վաճառականների համար, թող ուրախ լինի, որ ուսանող ունդիների մէջ նա պատրաստանաչութեան բեղմնաւորող սերմը ցանեց։

Երկու խօսք ևս հանդիսի համար. ս. պատարագից յետոյ սրբազան Առաջնորդը համառօտապէս բացատրեց օրուան նշանակութիւնը, հոգեհանգիստ կատարուեց ի յիշատակ վարդանանց և նոցա շաւղին հետևող Դպրոցի բարերարների, յետոյ հանդէսը թափորով մեծաւ Դպրանոց այնտեղ ևս պատշաճաւոր օրհնեցուածքներ և ազգային երգեր *) երգուեցան և ի վերջոյ պ. Բէգնազարեանը խօսեցաւ իւր առենաբանութիւնը։

*) Ծանօթ. Ցանկալի կլինէր, որ օկզբամբ երգուած ազգային երգի փոխարէն այսուհետև գոնէ ամեն տեղ երգուէր „Տէր կեցո զու զհայս“, որը պէտք է համարել մեր ազգային մեղեդին (гимнъ).

ԱՆԿԱՏՈՂՆԵՐ ԵՒ ԾԻԾԱՂԱՇԱՐԻՔ ՁՐՈՑՆԵՐ

Այս տարի Երևանում ձիւնը այնչափ առատ էր, որ փողոցներում անց ու դարձ անողներին ԶՐԻԱՊԷՍ բաժանում էին կարներից թիակներ սվ. (Ամեն մի թիակով ձիւնը հաւասար էր կէս փթի ծանրութեան)։

—

Պօլիցիան զգուշացնում է պ. քաղաքացիներին, որ զգուշութեամբ անցնեն անների նովպաններից տակից, չիցէ թէ նրանցից յանկարծ պոկվեն սառուցները (որք առ սակաւ մի մի փութ ծանրութիւն ունեն) և վնասեն անց ու դարձ անողներին, հակառակ դէպքում (նորանք անց ու դարձ անողները և ոչ սառուցները) կ՚ենթարկուեն սաստիկ և աննեբելի պատասխանատուութեան։

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

17 -19 ին ՓԵՏՐՎԱՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
ձիւն		
Բէօմիւրի ջերմաչափով		
6—	†2	—4

20 ին ՓԵՏՐՎԱՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
արև		
Բէօմիւրի ջերմաչափով		
—6	†4	—5

21 ին ՓԵՏՐՎԱՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
ձիւն		
Բէօմիւրի ջերմաչափով		
—6	†3	—5

Эчміадзинская паровая маслобойня Л. Е. Ханъ-агова.

ՄԵԾ ՊԱՏԻ ՀԱՄԱՐ

Выписка и установка всякаго рода машинъ и орудій.

Վաղարշապատում Լևոն Խան-Ղևեանցի շրջեշարժ ձիթահանում ծախվում են ՇԻՐՈՒՇԽԱ և ԿՏԻՒՏԻ քաղցր ՁԷԹ։

Ձիթավաճառները և ցանկացողները կարող են դիմել անձամբ կամ նամակով գործատանը։

„Վարժարան "ամենագրի խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեանը, որ ներկայ փետրվար ամսից կը շարունակուի „Վարժարանի" հրատարակութիւնը նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների օգնութեամբ, ուստի հրաւիրում է ցանկացողներին բաժանորդ գրուելու խմբագրատանը հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція журнала „Варжаранъ," Абасъ—Абатская площадь, домъ № 8,—*կամ դիմել խմբագրին՝* Сел. Вагаршапатъ, Кеворкянъ Академія, Николаю Хосровянъ.

Տարեկան գինն է հինգ ր. և կանխիկ։

Ծանօթ. Անցեալ հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և յունվար ամիսների վարժարանի փոխարէն խմբագրութիւնը հոտանում է տալ իւր բաժանորդներին կամ ընթերցանութեան մի նոր գիրք կամ նոյն ամիսների չափին համապատասխան մի համար յունիս ամսին։

Խմբագիր հրատարակիչ՝ Ն. Խոսրովեան։

ԾԱԽՈՒՄ Է

Թիֆլիզում շէնք շորի շկաֆ։ Պայմանների համար հարցնել Ռոստոմ Մադաթեանցից։

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ

Իմ տունս իւր պարտիզով, գտանեցեալ շհար մահլայում, աստաֆիևսկայա փողոցի վերայ, կաթուղիկէ եկեղեցու հանդէպ, ամենատժան գնով։

Յարութիւն Վարիքեանց։

ՔԱՂ. ԱՖԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՒ-ՓՈՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ 1884 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՑՈՒՆՎԱՐԻՑ.

ԾՐԱԳԻՐ

I ՏԷՐՈՒԹԵԱՆ կարգադրութիւններ։ II ԱՌԱՋՆՈՐԴՈՂ յօդուածներ առօրեայ ամէն տեսակ խնդիրների մասին։ III ԲՐԱՆԻԿԱՆ—լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։ IV ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ—Ռուսիայից և արտասահմանեան ամենայն տեղերից։ V ՔԱՂԱՔԱԿԱՆ—Քաղաքական կեանքի երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։ VI ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VII ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ։ VIII ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տեղեկութիւններ։ IX ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ֆելիետօններ, պատկերներ, զրոյցներ, վէպերը, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։ X ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹՓԻՆՆԵՐ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի. 6 ամսուան 6 րուբլի, հատով 5 կոպ.։

Խմբագիր հրատարակիչ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։



Улица Сулейманъ-Ханская (Губернаторская, планная)

АГАБЕКЪ АБАСКУЛИХАНОВЪ.

Продаетъ по умереннымъ цѣнамъ, пріобрѣтенное имъ у Тарханова садовое мѣсто, на Сулеймановской улицѣ, по участкамъ обозначеннымъ въ вышеозначенномъ чертежѣ. О цѣнахъ можно справиться у самаго хозяина - Агабека.

Խմբագիր—հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ։

Дозволено цензурою 22 Февраля 1884 года. гор. Эриванъ

Типографія Эмина Теръ—Григоряанцъ